600.0381.05.10.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2018 թվականի №381Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ.

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված 2017 թվականի ընթացքում օտարված (վաճառված) հիմնական միջոցների մասին տեղեկատվության ուսումնասիրության համաձայն Ընկերության կողմից վաճառվել են Երևան քաղաքի Բագրատունյաց 54/3, Արշակունյաց 17ա և Էրեբունի 17/2 (17ա) հասցեներում գտնվող հողատարածքներ և շինություններ (այսուհետ՝ Գույք).

բ) Գույքի օտարման պահին գործող «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով.

գ) Բագրատունյաց 54/3 հասցեում գտնվող հողատարածքի և շինության օտարման առնչությամբ Ընկերության 2017 թվականի հուլիսի 31-ի №04-ԿՀ-05/2443 գրությանն ի պատասխան Հանձնաժողովն իր 2017 թվականի օգոստոսի 14-ի №ՄՍ-2144Զ գրությամբ հայտնել է, որ սկզբունքորեն առարկություն չունի, և նշված գույքի վաճառքի գործարքն առավել արդյունավետ կազմակերպելու և հնարավորինս մեծ թվով գնորդների մասնակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դրանց

վաճառքի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակել համապատասխան զանգվածային լրատվամիջոցներում և Ընկերության պաշտոնական կայքում.

դ) Արշակունյաց 17ա և Էրեբունի 17/2 (17ա) հասցեներում գտնվող հողատարածքների և շինությունների օտարման վերաբերյալ նախապես համաձայնություն ստանալու նպատակով Ընկերությունը չի դիմել Հանձնաժողով.

ե) ի պատասխան Հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 20-ի №ՄՍ-1891Զ գրության Ընկերությունը, իր 2018 թվականի օգոստոսի 2-ի №04-ԿՀ-09/2947 գրությամբ հայտնել էր, որ Երևան քաղաքի Բագրատունյաց 54/3 հասցեում գտնվող գույքի օտարումն իրականացրել է առանց դրա վերաբերյալ համապատասխան զանգվածային լրատվամիջոցներում տեղեկատվություն հրապարակելու, քանի որ ոչ Ընկերության ներքին, և ոչ էլ Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերով նման ընթացակարգ նախատեսված չէ: Երևան քաղաքի Արշակունյաց 17ա հասցեում գտնվող գույքի օտարման առնչությամբ հայտնել է, որ գործարքը միաժամանակ ենթադրել է օտարվող գույքի կազմում ներառված ենթակայանի տեղափոխման նպատակով նույն տարածքում գնորդի կողմից այլ համապատասխան գույքի հանդիպակաց պարտավորություն:

Երևան քաղաքի Էրեբունի 17/2 (17ա) հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով նախատեսվել է վաճառված անշարժ գույքի փոխարեն գնորդի կողմից Ընկերությանը նույն մակերեսով և նույն հարմարություններով համարժեք գույքի փոխանցում.

զ) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Գույքի օտարման՝ Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի օգոստոսի 17-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 17-ի ԱԲ-2271Զ գրությամբ.

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը, իր 2018 թվականի սեպտեմբերի 3-ի №04-ԿՀ -09/3372 գրությամբ հայտնել է, որ Գույքը, օտարման պահին որևէ կերպ չի մասնակցել Ընկերության լիցենզավորված գործունեությանը և չի հանդիսացել լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ և շահագործվող

գույք, հետևաբար Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ ենթակետով սահմանված պահանջը չէր կարող համարվել Գույքի օտարման գործարքների նկատմամբ կիրառելի.

ը) Ընկերության 2018 թվականի օգոստոսի 2-ի №04-ԿՀ-09/2947 գրությամբ ներկայացված Երևան քաղաքի Արշակունյաց 17ա հասցեում՝ լիազոր մարմնի կողմից անշարժ գույքի գնահատողի որակավորում ստացած անձի եզրակացության և 2017 թվականի նոյեմբերի 17-ին Ընկերության և գնորդի միջև կնքված №A-952-17 առուվաճառքի պայմանագրի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված եզրակացությամբ և առուվաճառքի պայմանագրում նշված արժեքներում առկա են զգալի տարբերություններ, որի վերաբերյալ Հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի №ԱԲ-2579Զ գրությանն ի պատասխան Ընկերությունը հիմնավորումներ չի ներկայացրել.

թ) վարույթի շրջանակում ներկայացված փաստարկները և փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, հանձնաժողովը երկու անգամ 10 օրով երկարաձգել է վերոնշյալ վարչական վարույթի ժամկետը.

ժ) օտարված Գույքը, օտարման պահին ներառված էր ընկերության սակագնային մարժայի հաշվարկներում՝ լիցենզավորված գործունեությանը մասնակցող ակտիվների ցանկում, ուստի անկախ որևէ հանգամանքից Ընկերության կողմից գույքի լիցենզավորված գործունեությանը չմասնակցելու հարցը ենթակա է համաձայնեցման Հանձնաժողովի հետ.

ժա) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ ենթակետով սահմանված պահանջը.

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝
   1) նախազգուշացնել՝ Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ ենթակետը խախտելու համար.

2) ընդունել ի գիտություն, որ Գույքի օտարման արդյունքում ստացված եկամտի հաշվարկը կիրականացվի շուկայական արժեքի հիման վրա և կնվազեցվի Ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից.

3) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
5 հոկտեմբերի 2018թ.